ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Գանձակ, 21 սեպտեմբերի

Ցանկութեանս հակառակ անկարող լինելով ներկայ լինելու Էջմիածնի սրբավայրում տեղի ունենալիք Համազգային Մեծ Յոբելեանին, սեպուհ պարտականութիւն համարեցի նախքան տօնախմբութիւնները, ուղարկել դէպ սովորական խոստացածս տարեկան աննշան լումանս։ Ուստի ի լրումն 1910 թ. № 161 «Մշակում» տպված իմ նամակի, ուղարկում եմ ահաւասիկ առաջիկայ 1914 թ. համար ևս 5 ր. (1911, 1912 և 1913 թ.ների համար ուղարկած ունեմ խըմ-

բադրութեանդ առանձին նամակներով դարձեալ 5-ական ռուբլիներ, որպէսի գումարների ստացումը տպված է «Մշակի» 1912 թ. № 235-ում) խնդրելով բարեհաճել յատկացնել այդ փողը ուսուցիչների ապահովութեան և դպրոցական ֆոնդին։

Գարեգին քահ. Թումանեան